

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԳԵՐՄԱՆԻՈՅ ԹԵՄԱՅՆ

24 Յունուար 1993ին Քեօլնի առաջնորդանիստ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ գահակալութեան հանդիսութիւնը Գերմանիոյ Հայոց Առաջնորդ Գերշ. Տ. Գարեգին Ս. Նպիսկոպոս Պեքնեանի, որ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կարողիկոսի կողմէ եպիսկոպոս ձեռնադրուած էր 27 Սեպտեմբեր 1992ին:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը միացեալ Գերմանիան Հայոց Առաքելական Ս. Եկեղեցւոյ նուրբապետական համակարգէն ներս նոր քեմ հռչակած էր 31 Յունուար 1992 քուականին, իր սրբատառ կոնդակով:

24 Յունուար 1993ի գահակալութեան հանդիսութեան հանդիսապետց Կ. Պոլսոյ հայոց Ամենապատիւ Տ. Գարեգին Սրբազն Պատրիարքը առընթերակայութեամբ՝ Գերշ. Տ. Տիրայր Արք. Մարտիկանի, Տ. Վաչէ Արք. Ցովսէփեանի, Տ. Մեսրոպ Արք. Մուրքափեանի, Տ. Խաժակ Արք. Պարսամեանի, Տ. Վիգեն Եպս. Այքազեանի, Տ. Կոմիտաս Վրդ. Ցովսնեանի եւ Տ. Ցակոր Ա. Քին. Կէօֆեանի: Սոյն արարողութեան մասնակցեցան Եանու քոյր Եկեղեցիներու Եերկայացուցիչներ, ինչպէս՝ Ասորի ուրբափառ Եկեղեցւոյ եւրոպայի առաջնորդը՝ Գերշ. Տ. Ցուլիս Արք. Զիշէք, Կարողիկէ Եկեղեցւոյ քարտինալ Մայսնէրի փոխանորդը՝ Քլաուս Եպս. Տիք, Աւետարանական Եկեղեցւոյ պետ՝ Մանֆրէտ Քոք, Երովափիոյ ուրբափառ Եկեղեցւոյ պետը՝ Տոքք. Մէրավի վլոդ. Թէպէկէ, Մուս ուրբափառ Եկեղեցւոյ կողմէ՝ Նիքոլաուս Վրդ. Թոն, Ցոյն ուղղափառ Եկեղեցիէն՝ Միւռո Արշիմանտրիտը: Միջեկեղեցական Խորհուրդի կողմէ՝ Տէքան Բայնէր Ֆիշէկ եւ պատուելի Տոքք. Հանս-Կէռլ Լին, ճարոնական աւետարանական Եկեղեցիէն՝ Մարոշի Սասաքի, Հոլլանտական Աւետա-

րանական Եկեղեցիէն՝ Անտրէ Փիէրէր Ֆիլիկէր, Հոռվմէական Կարողիկէ Եկեղեցիէն՝ Տուրքա Գոնտա, Ազատ Աւետարանական Եկեղեցիէն՝ պատուելի Հէրպէր Յաէշրայք, Նահանգային Աւետարանական Եկեղեցիէն՝ պատուելի Հանս Փէրէրս Ֆրիտրիխ, եւ Առաջնորդարանի քաղի շրջանէն՝ Աւետարանական ու Կարողիկէ Եկեղեցիներու հովիւները:

Բացի Եկեղեցականներէ ներկայ էին նաև համայնքային գանագան կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, ինչպէս՝ Պէոլին, Համպուրկ, Պրաունշվայկ, Պոէմեն, Տիգպուրկ, Նոյվիտ, Քեօլն, Ֆրանքֆուրտ, Շրութվարք, Էսլինկէն, Հանաու, Միւնիխ, Նիւրնբէրկ, Մայնց եւ Քէի բաղադրաներէն:

Օրուան Ս. Պատարագը մատոյց Առաջնորդ Սրբազն Հայրը այս առքի Ամենայն Հայոց Կարողիկոսի կողմէ դրկուած կոնդակը կարդաց Ռումանիոյ եւ Պուլկարիոյ Առաջնորդ Գերշ. Տ. Տիրայր Արք. Մարտիկան. Քարոզեց Ամենապատիւ Սրբազն Պատրիարք հայրը եւ Առաջնորդ Գարեգին Սրբազն ին նուրիեց եպիսկոպոսական քանիկագին պանակէ մը: Շնորհակալութեան խօսք արտասանեց գերմաններէնով Առաջնորդ Սրբազն հայրը:

Ցես Ս. Պատարագի առաջնորդական գահակալութեան առիրով սիրոյ սեղան սարքուեցաւ Հիւրք անուն բաղադի Քաղաքապետական սրահին մէջ, ուր ներկայ եղան 550 հոգիներ: Ճաշի ընթացքին իրագործուեցաւ գեղարուեստական յայտագիր մը, որուն իրենց պատուաբեր մասնակցութիւնը բերին՝ փրոփ. Տոքք. Լուիզա Պողապալեան, Տոքք. Միհրան Տապադ, Արա Մալիկեան, Սայար Զաման, Արթ Պեքնեան եւ ապա շնորհաւորութեան ու գնահատանմի իրենց խօսքը բերին ներկայ Սրբազն հայրերը:

Յաջորդ օրը, 25 Յունուար 1993ին
ԱԼՔԵԿԱՊԵՏԻԿԻ միջեկեղեցական
համամիութենական կեդրոնին մէջ տեղի
ունեցաւ արարողութիւն մը,
մասնակցութեամբ հայ եւ բոյք եկեղեցիներու
ներկայացուցիչներու, որու ընթացքին
օրուան ողջոյնի խօսքը արտասանեց Տէքան
Բայներ Ֆիշէր՝ Միջեկեղեցական Խորհուրդի
շրջանային ժողովի ատենապետը։ Նոյն

վայրին մէջ կեսօրուայ նաշէն յետոյ
խորհրդակցութիւն մը եւ կարծիքներու
փոխանակում տեղի ունեցաւ ի մասին Հայ
Առաքելական եկեղեցւոյ եւ Հայ Հռովմէա-
դաւան եկեղեցւոյ ներկայ յարաբերութեան,
գերմանահայ գաղութի կազմակերպութեան
եւ գերմանահայ առաջնորդարանի
յառաջիկայ մշակելիք ծրագիրներուն։

Դիւան Առաջնորդարանի

HIS EXCELLENCY
PRESIDENT WILLIAM CLINTON
WHITE HOUSE
WASHINGTON (DC)

The Armenian Patriarchate and Community of Jerusalem congratulate You on Your inauguration as the President of the United States and offer their prayers for Your health and long life and for the success of Your endeavours in furtherance of peace around the world.

ARCHBISHOP TORKOM MANOOGIAN
ARMENIAN PATRIARCH OF JERUSALEM

ԾՆՆԴԵԱՆ ԾՆՈՐԾԱԿՈՐԱՆՔ

Պատրիարք Սրբազն Հայրը Նոր Տարուան եւ Սուրբ Ծնունդի առիթով իր քարեմաղբութեանց եւ շնորհաւորանքի գիրերը յղց Հոգեւոր եւ Կառավարական պետերուն, որոնց շնորհաւորագիրերը ընդունած է.-

- Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ, Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Առաջին Սրբազնագոյն Կաթողիկոսին։

- Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետ, Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին։

- Թուրքիոյ Հայոց Ամեն. Տ. Գարեգին Պատրիարք Գաղանեանին։

- Հռովմէական Կաթողիկ Եկեղեցւոյ Սրբազն Քահանայապետին՝ Նորին Սրբութիւն Ցովհաննեկու Պողոս Բ. Պապին։

- Մոսկուայի և Մուսիոյ Օրբոսոնք Եկեղեցւոյ Ամեն. Տ. Տ. Ալէքսէ Բ. Սրբազն Պատրիարքին։

- Գալուստ Կիւլպէլեան Հիմնարկութեան Նախագահ Տիար Մոպերք Կիւլպէնկեանին։

Թեմակալ Առաջնորդներուն, Պետական եւ Ազգային Հաստատութեանց ղեկավարներուն։